ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2024թ. հուլիսի 8 -ին, N 215 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՈՒՋԱՆԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐԱՔՍՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 61-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ուջանի Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Ա. Վարդանյանի 2024 թվականի հուլիսի 3-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ուջանի Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Արաքսյա Վարդանյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2023-2024 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի հուլիսի 10-ից օգոստոսի 13-ը ներառյալ:

2. Արաքսյա Վարդանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ուջանի Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Ուջանի Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Արմինե Գասպարյանի վրա:

3. Արաքսյա Վարդանյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 14-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 08.07.2024 12:18:23 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ